

# ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

ازتاک جريدته يومية سياسية وأدبية - الميزة السؤلة، إشارات وبيانات

1500 L.Ո. 75ԳԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 78 (21128) ՀԻՆԳՇԱԲԹԻ, 13 ՅՈՒՆԻՍ 2002 10 ԷՁ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԻՍՐԱԷԼԵԱՆ ՀՐԱՍԱՅԼԵՐԸ ՍԿՍԱՆ ԲԱՇՈՒԽԼ ՈՍՍԱԼԼԱՅԷՆ

Իսրայելեան հրասայլերը, որոնք ներխուժած էին Ռամալլա՝ անցալ Երկու- շաբթի օր, երէկ գիշեր Պէյրութի ժամով 23:00ին սկսան քաշուիլ քաղաքին, առա- ջին հերթին քակելով պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆա- թի կեդրոնատեղիի պաշարուը: Լուրը Իսրայելի պաշտօնապէս չհաստատեց թէեւ, սակայն պաղեստինցի ակա՛նատեսներ հաստատեցին պա՛յն:

Իսրայելեան բանակը այս քայլին կը դիմէ այն պահուն, երբ վարչապետ Արիէլ Շարոն կը գտնուէր Լոնտոն, ուր հասած էր Ուաշինկթընէն: Բրիտանիոյ մարա- քաղաքին մէջ ա՛ն տեսակցած է վարչապետ Թոնի Պլէրի հետ (մանրամասնու- թիւնները կարդայ ստորեւ):

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՐԻՏԻ ԲՈՂՈՔԻ ԻՇՄԱՆՈՒԹԵԱՆՑ ՈՐԴԵԳՐԱԾ ՕՐԷՆՔԻՆ ԴԷՍ

## ՄԱՋՈՒԹՈՎ ԲԱՆՈՂ ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐՈՒ ԿԱՐՐՈՂՆԵՐ ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐՈՒ ԿԱՐՐՈՂՆԵՐ ՓԱԿԵՅԻՆ ՕԳԱԿԱՅԱՆԻ ՀԻՆ ՃԱՄԲԱՆ

Մազուլեթով բանող ինքնաշարժներու վարորդներ երէկ կարճ ատենուան մը համար իրենց ինքնաշարժ- ներով փակեցին օդակայանի հին ճամբան, որպէս առաջին գործնական արտայայտութիւն՝ մազուլեթով բանող ինքնաշարժները արգիլելու որոշումին իրենց ընդդիմութեան: Ստեղծուեցաւ երթեւեկի սաստիկ խճողում:

«Թաքսիներու եւ ցամաքային փոխադրամիջոցնե- րու վարորդներու սենտիքաներու համադանակցու- թիւնը» երէկ Քոլալի հրապարակին մօտ ապահովու- թեան խիստ միջոցառումներու ներքեւ գումարեց բա- ցողեայ ընդհանուր ժողով մը, որուն ընթացքին վա- րորդներու սենտիքաներու համադանակցութիւննե- րու նախագահներ Ապտէլ Ամիր Նաթտէ եւ Պասսամ Թլէյս ներկաներուն հաւաստեցին, որ մազուլեթական քայլերը պիտի շարունակուին մինչեւ որ կառավա- րութիւնը հրաժարի մազուլեթով բանող ինքնաշարժ- ները արգիլելու իր որոշումէն:

Անոնք յայտնեցին, որ պետական պատասխանա- տուներու հետ բանակցութիւնները կը շարունակ- ւին, որպէսզի կառավարութիւնը ետ քաշէ այդ որո- շումը կամ աւելուցնէ պենզինի յատուկ սակ մը շնոր- հէ «կաթիլ թիւ» ինքնաշարժներուն:

Հիւսիսային Լիբանանի թաքսիներու վարորդնե- րու սենտիքան կոչ ուղղեց իր անդամներուն՝ Ուր- բաթ օր նստացոյց կատարելու փոխադրամիջոցներու նախարար Նաթիպ Միքաթիի գրասենեակին առջեւ եւ ընդհանուր բաց գործադուլի սկսելու Շաբաթ օր:

Լիբանանի աշխատանքներու եւ պաշտօններու սենտիքաներու ազգային համադանակցութիւնը կոչ ուղղեց պետութեան՝ յետաձգելու այս հարցին առըն- չութեան վերջնական որոշումը եւ վարորդներու սեն- տիքաներուն ներկայացուցած առաջարկներուն մէջ լուծումներ որոնելու:

Լեռնայի լիբանանի սենտիքաներու համադանակցու- թեան ընդհանուր քարտուղար Ռոյան Ատուան կոչ ուղղեց բոլոր աշխատանքներուն՝ զօրավիզ կանգ- նելու «թաքսիներու» վարորդներու պահանջներուն, իրաւունքներուն եւ ցոյցներուն:

«Փրկութեան եւ բարեփոխումի ազգային համախմ- բում»ի գործադիր յանձնախումբը թաքսիներու վա- րորդներու համադանակցութեան պատուիրակու- թիւնը ընդունելէ ետք հաղորդագրութեամբ մը զօ- րակցութիւն յայտնեց անոնք պահանջներուն եւ քննադատեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի մօտիկ երեսփոխաններու «անբերեալ» յայտարարականները, որոնք զարմանք կը յայտնեն իր ապրուստէն զրկուե- լու սպառնալիքին դիմաց ընդգոյզ վարորդներու կեց- ւածքին համար:

Երեսփոխան Ատան Արաբի վարորդներու սեն- տիքաներու հատուցումի պահանջներուն ակնարկե- լով ըսաւ, որ օրինազանցները պարզեւտրելու ժա- մանակաշրջանը անցած է. ան ժողովուրդէն պահան- ջեց չզործածել մազուլեթով բանող թաքսիները, այլ անոնց մասին տեղեկութիւններ տալ օստիկաններուն:

Երեսփոխան Ալէքէ Մաժալանի մազուլեթով բա- նող ինքնաշարժներու սեփականատէրերն ու վարորդ- ները զգուշացուց իրենց որոշած ցոյցերը կատարելէ, որովհետեւ ժողովուրդը դժգոհ է մազուլեթի հոտէն եւ վնասներէն:

●ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ նախարարութիւնը երէկ հա- ղորդագրութեամբ մը հակազդեց կարգ մը լրատու աղբիւրներու այն հաղորդումներուն, թէ պետական զաղտնի եւ ապահովական մարմիններ միջամուխ կ'ըլլան սենտիքայական շարժումներու, մասնաւոր ինչ կը վերա- բերի մազուլեթով բանող ինքնաշարժներու արգիլումին ղէմ վարորդներու սենտիքաներու շարժումին:

Հաղորդագրութիւնը հաւաստեց, որ իրեն ենթա- կայ մարմիններէն ոչ մէկը նման միջամտութիւններ կ'ընէ, իսկ այս հարցին մէջ այս մարմիններու դերա- կատարութիւնը սահմանափակուած է ընդհանուր ապահովութեան պահպանումով, ցոյցերու եւ հա- ւաքներու ապահովութեան հսկելու իմաստով:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ

## ՇԱՐՈՆ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԵՆ ՄԵԿՆԵՑԱԻ ԼՈՆՏՈՆ

Աւարտելէ ետք Միաց- եալ Նահանգներ այցելութիւնը Իսրայելի վարչապետ Արիէլ Շարոն երէկ Լոնտոն մեկնեցաւ՝ ուր տեսակ- ցութիւն մը ունեցաւ Բրիտանիոյ վարչա- պետ Թոնի Պլէրի հետ. անոնք քննարկեցին միջին արեւելեան գործընթացին կապ- ւած հարցեր: Շարոնի Լոնտոն ժամանման պահուն պաղեստին- եան շրջաններուն մէջ բախումները թափ կը ստանային՝ նոր փոփո- քի վերադարձը պատ- ճառելով:

Շարոն աւարտեց Միացեալ Նահանգ- ներ վեցերորդ այցե- լութիւնը, որուն ըն- թացքին յաջողեցաւ ապահովել նախագահ Ճորձ Պուշի վարակցու- թիւնը Իսրայելի՝ պա- ղեստինեան անմաս- պանական գործողու- թիւններուն դէմ ինք- նապաշտպանութեան միջոցառումներուն:

Մինչ այդ, Կապայի մէջ հրէական Նեցա- րիմ բնակեցման վայ- րին ապահովութեան հսկող իսրայելեան ու- ժէր սպաննեցին ութ տարեկան պաղես- տինցի մանուկ մը, որ բնակարանին դուրս գալով նպարավաճա- ռին կ'երթար քաղցրե- տի գնելու համար: Իսրայելեան ուժեր ար- դարացուցին իրենց արարքը, դիտել տա- լով, որ իրենք հակա- դարձած են իրենց դէմ արձակուած փամ- փուշտներուն: Բնա- կին մէկ բանբերը ըսաւ, որ կրակ բացած են նաեւ դէպի Նեցա- րիմ դիմող խումբ մը պինտայններու վրայ չորս հոգի սպաննե- լով: Ճաթիի պինտայ թելերէն մէկը յայտա- րարեց, որ իսրայելեան պինտորական դիրքի մը վրայ կը յարձա- կէին պինտայնները, ոչ թէ՛ բնակեցման վայրին:

Շարոնի ընկերակ- ցած պաշտօնատար- ներ ըսին, որ վարչա- պետը Պուշիին պա- հանջած է խաղաղու- թեան համաձայնագիր մը չպարտադրել Իս- րայելին: Շարոն ըսաւ



Թոնի Պլէրի կ'ընդունի Շարոնը:

է նաեւ, թէ Իսրայելի ընտրութիւնները պատճառ պիտի դառ- նան, որ առնուապէս վեց մամա ստած մնան դիւանագիտա- կան ճիգերը, որովհե- տե ինք ընտրապայ- տար պիտի մղէ: Շարոն Պուշի յայտնած է, թէ այնքան ատեն որ պա- ղեստինեան ահաբեկ- չութիւնը կը շարու- նակուի, պիտի չկարե- նայ զօրակցութիւն յայտնել պաղեստին- եան պետութեան:

Միւս կողմէ, Միաց- եալ Նահանգներու արտաքին գործոց նա- խարար Բոլի Փաուըլ յայտնեց, որ Ուաշինկ- թըն պիտի շարունակէ գործակցութիւնը պա- ղեստինեան իշխա- նութեան նախագահ Եսսէր Արաֆաթի հետ եւ թէ Միջին Արեւելքի խաղաղութեան խորհրդածոյցով մը կայացնելու ծրագիրը ի փորու կը մնայ: Նա- խագահ Պուշ մէկ օր առաջ ըսած էր, թէ պալ- մանները յարմար չեն խորհրդածոյցովը գու- հանջած է խաղաղու- թեան համաձայնագիր մը չպարտադրել Իս- րայելին: Շարոն ըսաւ

տոսի նախագահ Հիւս- ընտրութիւնները պատճառ պիտի դառ- նան, որ առնուապէս վեց մամա ստած մնան դիւանագիտա- կան ճիգերը, որովհե- տե ինք ընտրապայ- տար պիտի մղէ: Շարոն Պուշի յայտնած է, թէ այնքան ատեն որ պա- ղեստինեան ահաբեկ- չութիւնը կը շարու- նակուի, պիտի չկարե- նայ զօրակցութիւն յայտնել պաղեստին- եան պետութեան:

### ԱՊՏԱԼԸ ԹԱԳԱՌԸ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՇՏԱՆԷ

Յորդանանի Ապ- տալլա թագաւորը կոչ ուղղեց Եւրոպական Միութեան առաջնոր- դի դէր ստանձնելու՝ յառաջ մղելու համար պաղեստինեիսրայելե- ան խաղաղութեան ճիգերը: Ապտալլա պաշտօնը, որ տագ- նապը կը սպառնայ ծայրայեղախաղաղութեան իրաւորել ամբողջ աշ- խարհի տարածքին:

Ապտալլա թագա- տը, որ կը խօսէր եւրո- պական խորհրդարա- նին դիմաց, ըսաւ, որ պաղեստինցիներն ու իսրայելացիք առան- ձին պիտի չկարենան լուծել տագնապը եւ համաձայնութիւն մը գոյացնել: Ան շեշտեց, որ Եւրոպա պետք է դե- կավարի դերակատա- րութիւն ունենայ: Ան աւելցուց, որ Միու- թիւն, Ռուսիա եւ արա- բական երկիրներու դաշնակցութիւնը պիտի անհրաժեշտ է տնտե- սական, քաղաքական եւ ապահովական զօ- րակցութիւն տալու համար հակամարտ կողմերուն: Յաջողու- թեան համար կարեւոր են միջապային նա- խաճեռնութիւնները, ըսաւ Ապտալլա թագա- տը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԵՌՕՐԵԱՅ ՆԻՍՏԵՐԸ Ի ՎԵՐՋՈՅ ԱՄԱՐՏԵՑԱՆ

Երէկ աւարտեցան Հայաստանի Ազգա- յին ժողովի երեսուցի նիստերը: Խորհրդա- րանը իր օրակարգին վրայ եղող 15 կէտե- րէն ընդունեց միայն երեք նախագիծեր: Սակայն այս նախագիծերը չներկայաց- ւեցան խորհրդարանի կեդրոնական ամպիոնէն, որովհետեւ ընդդիմադիր քա- նի մը երեսփոխաններ դարձեալ «պաշա- րած» էին ամպիոնը: Նշեալ երեսփոխա- ններ խորհրդարանի երեսուցի նստաշրջա- նի առաջին երկու գումարումներուն ալ (Յունիս 10 եւ 11) անդամայութեամբ էին Հա- յաստանի Ազգային ժողովի գործունէու- թիւնը՝ խորհրդարանի կեդրոնական ամպիոնը գրաւելով եւ անվայել արտա- յայտութիւններով ու անկարգապահու- թեամբ խափանած էին նիստերու ընթաց- քը:

Հայաստանի Ազգային ժողովի նախա- գահ Արմէն Խաչատրեան ընդհատեց երէկու- ան նիստը, երբ ընդդիմադիր երեսփո- խանները առիթ չտուին, որ Հայաստանի հանրերու մասին օրէնքի նախագիծի վե- կուցաբերը բարձրանայ ամպիոն:

Ինչ կը վերաբերի ընդդիմադիրներուն, ապա անոնց պնդումով, իրենց ներկայա- ցուցած «Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեանը պաշտօնազրկելու հարցին մասին եւրակացութիւն ստանալու համար Հայաստանի Սահմանադրական դատա- րան դիմելու» նախագիծը պիտի շարունա- կէ մնայ Ազգային ժողովի օրակարգին վրայ: Միւս կողմէ, Ազգային ժողովի նա- խագահ Արմէն Խաչատրեան շեշտեց, որ նշեալ նախագիծը օրակարգին վրայ չնե- րառնելու քայլով ինք գործած է օրէնքի ծի- րէն ներս, եւ թէ նախագիծին հեղինակնե- րը կրնան դիմել Սահմանադրական դա- տարան՝ ստուգելու համար իր այս քայլին իրաւական հիմքը:

## ԵԱՀԿԻ ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀՆԸ ԱՅՅԵԼԵՑ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՉԱՐԵԱՆԻ



Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեան երէկ ընդունեց ԵԱՀԿի Մինսքի խմբակի ֆրան- սացի նոր նախագահ Հիով Պեոնէն, որ Մինս- քի խմբակին մէջ իբրեւ Ֆրանսայի ներկայա- ցուցիչ պիտի փոխարինէ Ֆիլիպ տը Սիւրմէնը: Հանդիպումին ընթացքին կողմերը արծա- ժեցին Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծ- ման գործընթացի ներկայ հանգրուանին առըն- չուող հարցեր, ինչպէս նաեւ անդրադարձան ԵԱՀԿի Մինսքի խմբակի յառաջիկայ գործունէու- թեան:

Հայաստանի մէջ ֆրանսացի դեսպան Հան- րի Կիւնիի ընկերակցութեամբ, Հիով Պեոնէն նա- եւ այցելեց Հայաստանի պաշտպանութեան նա- խարար Սեթ Սարգսեանին: Քննարկութեան Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին, տագ- նապի խաղաղ լուծման հեռանկարներուն, ինչ- պէս նաեւ շրջանային կարգադրումներու առըն- չուող հարցեր:

(ՌՈՅԹԸՐԸ)


## ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ՝ ՈՒՉՊԵՔԻՍԱՆԻ ՄԷՁ

Հայաստանի ար- տաքին գործոց նա- խարար Վարդան Օս- կանեան պաշտօնա- կան այցելութեան մը համար երէկ մեկնեցաւ Ուկրաինա: Նա- խարարը հանդիպում ունեցաւ իր ուկրաին պաշտօնակիցին՝ Ապ- տուլյակի Զամիլովի հետ: Կողմերը ընդգը- ժեցին երկու երկիրնե- րու յարաբերութիւն- անցողիկ արդարեւ զարգացումնե- րը: Զամիլով ընդունեց Հայաստան այցելելու նախարար Օսկանեանի հրաւերը:

Նախարար Օսկանեան Նախարար Օսկանեան այցելեց Ուկրաինա- տանի Գախագահ Իս- լաւ Զարիմովի: Հան- դիպման ընթացքին քննարկութեան երկու երկիրներու կապերու զարգացումն եւ իրա- ւական յաշտի ընդար- ձակման վերաբերող հարցեր, ինչպէս նաեւ շրջանային եւ միջազ- գային խնդիրները:

Սեյի ուշ, Գախա- րար Օսկանեան հան- դիպում ունեցաւ Ուկ- րաինա տանի հայ հա- պեքիստանի հայ հա- մայնքի ներկայացու- ցիչներուն հետ:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԵՒ ՊԵՐՐԻ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ



Լահուտ եւ Պերրի

Նախագահ գործիչ Լահուտ երէկ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիտ Պերրին եւ անոր հետ քննարկեց երկրին քաղաքական զարգացումներն ու շրջանային իրավիճակը, ինչպէս նաեւ շրջանային հարցերը լուծելու միջազգային ճիգերը:

Հանդիպումէն ետք Պերրի յայտարարեց, որ նախագահ Լահուտի հետ քննարկած է մագոլթով բանող ինքնաշարժները արգելող օրէնքը գործադրելու անհրաժեշտութիւնը, մանաւանդ որ ներքին գործոց նախարարը, հակառակ հիւսիսային Մեթինի մասնակի երեսփոխանական ընտրութիւններու ստեղծած վիճակին, շրջաբերականով մը թելադրեց գործադրել խորհրդարանի որոշեցած օրէնքը, որուն հիմամբ մագոլթով բանող ինքնաշարժները կ'արգիլուին Յունիս 15էն սկսեալ: «Ես խորհրդարանին անունով զօրակցութիւն կը յայտնեմ ներքին գործոց նախարարին եւ կողմ կ'ունենամ հետապնդելու այս որոշումին գործադրութիւնը, մանաւանդ որ նախարարաց խորհուրդն ան այս գծով որոշում տուած է», ըսաւ ան:

Մագոլթով բանող ինքնաշարժներու սեփականատէրերուն հատուցումներու յաւելումին մասին Պերրի ըսաւ, որ «անիկ կընայ արդար իրականացը ըլլալ եւ մենք դէմ չենք անոր, պայմանաւ որ այս ուղղութեամբ կարգադրութիւնները չուշացնեն օրէնքի գործադրութիւնը»:

Նախագահ Լահուտ երէկ նաեւ ընդունեց այցելութիւնները ընդհանուր դատարար Ատանուսի եւ պետութեան անվտանգութեան ուժերու ընդհանուր տնօրէն գործիչ Մանուելի:

ԵՐԵՎՈՒՄԱՆ ՆԵՍԻՊԼԱՀՈՒՏ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒ ՆԵՑԱԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՀԵՏ

Երեսփոխան Նեսիպ Լահուտի գրասենեակը հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ երեսփոխանը երէկ առաւօտ հեռաձայնած է հանրապետութեան նախագահ Կոր. Էմիլ Լահուտի եւ անոր տեղեկացուցած՝ օր Քըրնէթ Շրիուանի հանդիպումի Երեքշաբթի օրուան ժողովին ներկայացուցած է Պապատա իր այցելութեան եւ նախագահին հետ ունեցած տեսակցութեան արխիւքները, մանաւանդ ինչ կը վերաբերի նախագահին եւ Հանդիպումին միջեւ երկխօսութեան շարունակումին: Հաղորդագրութիւնը աւելցուց, որ երեսփոխանը նախագահ Լահուտի յայտնած է, որ Հանդիպումի ժողովը ողջունած է այս արդիւնքը եւ որոշած՝ անոր քննարկումին յատկացնել հետագայ նիստ մը, նկատի առած որ այս հարցը շատ կարեւոր է, իսկ Երեքշաբթի օրուան ժողովը յատկացուած էր քննարկելու Մեթինի մասնակի ընտրութեան եւ Հանդիպումին պատուիրակութեան Միացեալ Նահանգներ տալիք այցելութեան կապումը հարցեր:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Պերճուհի Աշեան եւ զաւակը՝ Մայր Տ. Շահէ Ա. քննչ. Մասոյեան եւ ընտանիք  
Տ. Հայկազ քննչ. Մասոյեան եւ ընտանիք  
Տէր եւ տիկին Յակոբ Աշեան եւ զաւակուհի  
Տէր եւ տիկին Բիւզանդ, Գրիգոր Արսլանեան եւ ընտանիք

Տէր եւ տիկին տղեթ. Ղազար Պողոսեան  
Օր. Սիլվա Չորպաճեան  
Տէր եւ տիկին Արրահամ, Յակոբ եւ Գէորգ Չորպաճեան եւ ընտանիք

Տիկին Մարի Աթաշեան եւ ընտանիք  
Տէր եւ տիկին Շահէ Պապաիբեան եւ զաւակուհի  
Տէր եւ տիկին Ալպի Չոփուրեան եւ ընտանիք  
Տէր եւ տիկին Հայկ Ապաճեան եւ ընտանիք  
եւ համայն ազգականներ կը գումար իրենց ամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին:

ՅՈՎԱԵՓ (ՅԱԿՈՒ) ԱՇԾԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 12 Յունիս 2002, առաւօտեան ժամը 2:15ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարեցաւ Չորեքշաբթի, 12 Յունիս, կէսօրէ ետք ժամը 4:0ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատուն:

● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:  
● Յուանկուցութիւնները կ'ընդունուին հաճուցեալի բնակարանը՝ «Ռէյֆուս», Հինգշաբթի 13, Ուրբաթ 14 եւ Շաբաթ 15 Յունիսին:

ՎԱՐՉԱԿԵՏ ԸԱՐԻՐԻ ԿԸ ԿԱՏԱՇԵՑՆԵ, ՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՅԱՊԱՂ ՊԻՏԻ ԳՈՐԾԱԴՐԵ ՄԱՂՈՒԹՈՎ ԲԱՆՈՂ ԻՆՔՆԱՇԱՐՄԱՆ ԳԾՈՎ ՕՐԵՆԵՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի վարչապետարանին մէջ յայտարարեց, որ մագոլթով բանող ինքնաշարժներն ու փոքր օթնպիւսները պիտի կասեցնեն իրենց աշխատանքը: «Կառավարութիւնը անպայման եւ անյապաղ պիտի գործադրէ խորհրդարանին կողմէ վաւերացուած այս օրէնքը բաւարարելու», ըսաւ ան:

ՎԱՐՉԱԿԵՏ ԸԱՐԻՐԻ ԿԸ ՄԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Միւս կողմէ, վարչապետ Հարիրի այցելեց երեսփոխան Ղասսան Ալ-Քար: Քննարկուեցան ընդհանուր հարցեր:

Վարչապետ Հարիրի ընդունեց առողջապահութեան նախարարուհի Մարի Պերրի Գրուսի եւ իր հետ ընդհանուր տնօրէն Ուալիտ Ամարը, ընդհանուր կողմէ նախարար Սլէյման Ֆրենտիէի խորհրդական Ալպի Ճուստարի եւ Լիբանանի մէջ Միջազգային Դրամատան ներկայացուցիչ Պաստաճ Ռամատանի:

Ամար յայտնեց, որ այցելութեան ընթացքին քննարկուած են յառաջիկայ կիրակի օր վարչապետին հովանաւորած

նէն ի վեր խոպան մնացած դաշտերուն գծով բարգաւաճման հաւասարակշռուած ծրագրի մը մշակումը:

Վարչապետ Հարիրի այցելեց արտաքին գործոց նախարար Մանուէլ Համուտ: Քննարկուեցան միջազգային վեհաժողովի մը կայացումին մանրամասնութիւնները եւ հարց դրուեցաւ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորջ Պուշի այդ վեհաժողովին մասին ունեցած պատկերացումը բացատրող յայտարարութեան ուղարկումը:

Վարչապետին այցելեց երեսփոխան Մոհամէտ Ֆրենտիէ, որուն կ'ընկերակցէր Պրենթ ժայէլի առեւտրական հաստատութիւններու սեփականատէրերու սենտիքային պատուիրակութիւն մը:

Հանդիպումէն ետք սենտիքային նախագահ Թարէք Ալի Պեզզի յայտնեց, որ վարչապետին առաջարկած են 13 Յունիսին Պրենթ ժայէլի փառատուրը հովանաւորել: Սենտիքային ներկայացուցիչ պատուիրակութիւնը պահանջած է նաեւ, որ շրջանին վրայ գրուած հին պարտքերը չհարցազրկուին եւ տուրքերը նուազին:

Հարիրի ընդունեց երեսփոխան ժամայ Իսմայիլը, որուն հետ քննարկեց հիւսիսային Լիբանանի եւ յատկապէս Աքքարի բնակչութեան կապուած հարցեր: Վարչապետին խնդրուեցաւ Լիբանանի անկախութեան

նէն ի վեր խոպան մնացած դաշտերուն գծով բարգաւաճման հաւասարակշռուած ծրագրի մը մշակումը:

Վարչապետ Հարիրի այցելեց արտաքին գործոց նախարար Մանուէլ Համուտ: Քննարկուեցան միջազգային վեհաժողովի մը կայացումին մանրամասնութիւնները եւ հարց դրուեցաւ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորջ Պուշի այդ վեհաժողովին մասին ունեցած պատկերացումը բացատրող յայտարարութեան ուղարկումը:

Վարչապետին այցելեց երեսփոխան Մոհամէտ Ֆրենտիէ, որուն կ'ընկերակցէր Պրենթ ժայէլի առեւտրական հաստատութիւններու սեփականատէրերու սենտիքային պատուիրակութիւն մը:

Հանդիպումէն ետք սենտիքային նախագահ Թարէք Ալի Պեզզի յայտնեց, որ վարչապետին առաջարկած են 13 Յունիսին Պրենթ ժայէլի փառատուրը հովանաւորել: Սենտիքային ներկայացուցիչ պատուիրակութիւնը պահանջած է նաեւ, որ շրջանին վրայ գրուած հին պարտքերը չհարցազրկուին եւ տուրքերը նուազին:

Հարիրի ընդունեց երեսփոխան ժամայ Իսմայիլը, որուն հետ քննարկեց հիւսիսային Լիբանանի եւ յատկապէս Աքքարի բնակչութեան կապուած հարցեր: Վարչապետին խնդրուեցաւ Լիբանանի անկախութեան

ՃԱՓՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ



Վարչապետը կ'ընդունի ճափոնցի դիւանագետը

Ճափոնական կառավարութեան Միջին Արեւելքի հարցերու յատուկ պատուիրակ թաղու Արիմա երէկ տեսակցութիւններ ունեցաւ իշխանութեան երեք պետերուն եւ արտաքին գործոց նախարարին հետ:

Ճափոնցի պաշտօնատարր պատուիրակութեան մը ընկերակցութեամբ այցելեց նախագահ գործիչ Լահուտի եւ անոր ներկայացուց Ճափոնի արտաքին գործոց նախարարին պաղեստինեան շրջաններ եւ Իսրայէլ այցելութեան եւ Եսաէր Արաֆատի ու Արիէլ Շարոնի հետ պաղեստինեան շրջաններու զարգացումներու մասին ունեցած խօսակցութիւններուն արդիւնքները:

Արիմա նախագահ Լահուտի ըսաւ, որ Ճափոնի կառավարութիւնը բարձր կը գնահատէ Պէյրութի արաբական վեհաժողովին ընթացքին նախագահին դերակատարութիւնը եւ յայտարարութիւնը՝ խաղաղութեան արաբական նախաձեռնութեան, որ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացի վերակենդանացումին նպաստող կարեւոր զարգացում մըն է:

Ճափոնցի պաշտօնատարր ներկայացուց պաղեստինեան շրջաններու դէպքերուն նկատմամբ իր կառավարութեան կեցուածքն ու պաղեստինեան իշխանութեան բարգաւաճման եւ տնտեսական ծրագրերներուն անոր տրամադրած օժանդակութիւնը:

«Անհրաժեշտ է, որ Լիբանան ներկայ գտնուի եւ մասնակից ըլլայ արաբ-իսրայէլեան հակամարտութեան լուծումը գտնելու որեւէ խորհրդատուութիւն», ըսաւ ան:

«Ճափոն նախանձանդիր է Լիբանանի հետ իր յարբերութիւններու բոլոր մարգերէն ներք գարգացումին եւ ամրապնդումին: արդէն երկու ժողովուրդներու բարեկամութեան վրայ հիմնուած սերտ գործակցութիւն կայ երկու երկիրներու կառավարութիւններուն միջեւ», ըսաւ Արիմա

Նախագահ Լահուտ ճափոնցի պաշտօնատարր այցելութիւնը ողջունելով հաւաստեց, որ ինքն այ նախանձանդիր է այս կապերու ամրապնդումին եւ բարձր գնահատեց այս ուղղութեամբ Լիբանանի մէջ Ճափոնի դեսպանի ի գործ դրած ճիգերը:

Ան ներկայացուց Լիբանանի կեցուածքը շրջանային զարգացումներուն եւ միջազգային խորհրդատուութիւնը գումարելու ճիգերուն նկատմամբ, ընդգծելով, որ նման ժողով մը կը հիմնուի միջազգային որոշումներու գործադրութեան հիմնահարցին վրայ:

Ճափոնի կառավարութեան պատուիրակը նոյն հարցերը քննարկեց խորհրդարանի նախագահ Նեպիտ Պերրիի, վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ արտաքին գործոց նախարար Մանուէլ Համուտի հետ:

ՎԱՐՉՈՒ ԿԱՍ ԾԱԽՈՒ ԾԱԼԷ

● 65 քառ. մետր, «Sawary» resort, Պաթրուհի մէջ, հեռ. 03 - 883083:

Ս. ԽԱԶ ԵԿԵՂ ԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ - ԶԱՒՔԱ ՕԾՈՒՄ ՆԱՀԱՏԱԿ ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱԼՈՅԵԱՆԻ ՆՈՐ ԽՈՐԱՆԻՆ

Երանելի ցահատակ Իգնատիոս Մալոյեանի տօնին առիթով,

ԱՄԵՆ. ԵՒ ԳԵՐՋ. ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺՅ. Կաթողիկոս Պատրիարք Կաթողիկէ Եւրոպայ

Կը պատարագէ եւ օծումը կը կատարէ ցահատակ Իգնատիոս Մալոյեանի նուիրուած նոր խորանին, Զաւթայի Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ, Կիրակի, 16 Յունիս 2002, առաւօտեան ժամը 10:00ին

ՇՐԱԻՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ (Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի)

2002-2003 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիմնարկի 2002 2003 տարեշրջանի հինգ թէ նոր ուսանողներու արձանագրութիւնները կը կատարուին 17ին 28 Յունիս 2002, ժամը 9:00էն 14:00, Համազգայինի Նշան Փալատեան քեմարանի գրասենեակներէն ներս:

Շեռնայն՝ 01-375410  
03-429685  
01-372446

FAX  
E-MAIL Hamazcen@Cyberia.net.lb

● Մուտքի քննութիւնները պիտի կայանան 13 Յունիսին 2002ին:

● Գիշերօթիկնոց ընդունելու համար թեկնածուները պարտին իրենց դիմումագիրները ներկայացնել մինչեւ 15 Օգոստոս 2002:

Ամրան եղանակին գրասենեակները բաց պիտի ըլլան Երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10:00էն 1:00:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

«ԹՈՂՈՅ ԲՈՅՆ»Ի ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԼՄԱՎԵՐԶԻ ՀԱՆԴԷՍ

Տեղի պիտի ունենայ Շաբաթ, 15 Յունիս 2002, երկուշաբթի ժամը 7:00ին, «Թռչնոց Բոյն»ի սրահին մէջ:

Կը հրակիրեն «Թռչնոց Բոյն»ի բոլոր բարերարները, բարեկամները եւ ծնողները՝ ներկայ գտնուելու եւ վայելելու բացուած ժողովներու թարմ բուրմունքը:

ՇՐԱԻՐ

# Կ'ԱՇԽԱՏԻՆՔ ԲԱՐԵՓՈՒՆԵԼՈՒ ԼՍԱՏԵՍՈՂԱԿԱՆ ՄԱՐԶԻ ՕՐԵՆՔԸ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԻՏԻ

Տեղեկատուության նախարար Ղազի Արիտի երկն ձայնասփիւռի եւ պատկերասփիւռի կայաններու ներկայացուցիչներուն հետ քննարկեց լրատուական մարզի իրավիճակը, շեշտը դնելով այս ծիրին ներս յարգելու ազգային սկզբունքներն ու լրատուական մարզի օրէնքը:

Ան յայտնեց, որ կ'աշխատի բարեփոխելու այդ օրէնքը, բայց այս տրամադրութիւնը չի կրնար արդարացնել օրէնքի անտեսումը. ոչ ոքի կ'արգիլենք, որ իր կարծիքը արտայայտէ, ոչ ալ կ'ուզենք կաշկանդել կողմ մը կամ հաստատութիւն մը, բայց նաեւ կը մերժենք, որ անոնք համայնքային զօրաշարժներ յայտարարեն կամ կիրքեր բորբոքեն, ըսաւ Արիտի:

Նախարարը նաեւ դատապարտեց եպիսկոպոս Կրէկուար Հատատի դէմ քանի մը օր առաջ գործուած արարքը. ան ըսաւ, որ ազգային եւ եկեղեցական վստակի տէր այդ կղերականին դէմ բռնարարքի փորձ կատարուած է, որովհետեւ անոր արտայայտած տեսակէտը չէն բաժնէր բազմաթիւ ծայրայեղականներ եւ արմատականներ:

# ԺՈՍՂԱԹ ԵՒ ԹԱՄՍԱՍ ՍԱԼԱՍ ԴԷՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈՒՆՈՒԹԵԱՆ

Ընկերվար Յառաջդիմական Կուսակցութեան ղեկավար Ուալիտ Ժոմպլար երկն ընդունեց նախկին երեսփոխան Թամամ Սալամը, որուն հետ արծարծեց երկիրը յուլոյդ ներքին հարցեր, ինչպէս նաեւ հիւսիսային Մեթիս երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն առընչուող խնդիրներ:

Հանդիպումէն ետք Սալամ յայտնեց, որ վերջին շրջանին կառավարութեան դերակատարութիւնը խոցելի էր, յատկապէս օրինաւորութիւնները չսպառնալով իր կարողութեան մէջ:

Կառավարութիւնը փոփոխութեան ենթարկելու մասին հարցումի մը պատասխանելով, Թամամ Սալամ ըսաւ, որ այդ առաջարկը լուծում մը չէ եւ կոչ ուղղեց երկրին մէջ միասնականութիւն ստեղծելու եւ համախոհութեամբ ապրելու, վերջ տալով բոլոր հարցերուն, որոնք կրնան ազգային տագնապներու պատճառ դառնալ:

Ժոմպլար շեշտեց, որ երկրին մէջ պէտք է ազգային միասնականութիւնը վորանայ եւ դէմ դնէ հաւանական որեւէ տագնապի: Կառավարութիւնը փոխելու մասին Ժոմպլար նկատել տուաւ, որ ներկայ շրջանին կենսական է, որ կառավարութիւնը իր աշխատելաձեւը բարելաւէ, որովհետեւ «կառավարութիւնը փոխելը աւելի լուրջ հարց է», աւելցուց ան:

Ընտրութիւններու արդիւնքներուն ուշացումին ակնարկելով, Ժոմպլար շեշտեց, որ այլ երկիրներու մէջ ալ կը պատահին նման հարցեր, բայց կը լուծուին: Ան նախագահ Լահուտի դերակատարութեան վստահելով, ըսաւ, որ նախագահը կարողացաւ հարցը իր միջոցներով լուծել:

# Ի՞ՆՉ ԿՐ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Տեղական մամուլը երկն ընդհանրապէս լուրերէ կ'ազատէր քննարկեւորական տակ առած է որոշ ժամանակաշրջանէ ի վեր շրջան ընող մազուլթի գործածութեան կասեցման հարցը եւ ասոր կողքին մեծ թիւով զբոսաշրջիկներու Լիբանան հոսքը:

«Տիրա» այս մասին կը գրէ. «Մէկ միլիոն եւ 100 հազար զբոսաշրջիկ եւ արտագաղթած սկսան Լիբանան հասնիլ. 300 հազար սէնտցի, 180 հազար ֆոնթիլցի, 120 հազար միացեալ էմիրութիւններու քաղաքացի եւ 500 հազար լիբանանցի: Մազուլթիով բանող ինքնաշարժներու պայքարը կը յաջորդէ Մեթիսի ընտրութիւններուն եւ Հարիրի Մըքարրի կը մղէ կառուցները ամբաստանելու»:

«Անուար»-ի համաձայն՝ «Կառավարութիւնը կը դիմագրաւէ մազուլթիով բանող ինքնաշարժներու վարորդներուն կողմէ ճամբաները փակելու վտանգը»:

«Սաֆիր» կը նշէ. «Մազուլթ գործածողները վաղը՝ ճամբաներուն վրայ երեսփոխաններ եւ Հարիրի կ'ամբաստանեն կառուցները՝ փողոցները հրահրելով»: Թերթը նաեւ հրապարակեց հատուցումներու դրուութիւնը, մէկ միլիոն լիբանանեան ոսկի փոփոխութիւններու իրագործումէն ետք:

«Նահար» կը գրէ, թէ մազուլթ կը բռնկի քաղաքական գետնի վրայ. ան նաեւ հրատարակեց կենսոլորտի նախարար Մուսայիբ հետ թերթին ունեցած հանդիպումը, որուն ընթացքին նախարարը ըսած է, թէ մազուլթի գործածութիւնը ահաւոր ազդեցութիւն կ'ունենայ երկրին օդին եւ զայն շնչողներուն վրայ եւ հաստատած է, թէ այս առնչութեամբ տրուած որոշումը վերջնական է եւ ետգործի կարելիութիւն չկայ:

«Մուսքապալ» օրաթերթը իր առաջին էջով լոյս ընծայեց ոստիկանի մը նկարը, որ ինքնաշարժներուն ուղղութիւն կու տայ՝ քիթն ու բերանը ծածկած յատուկ «բերանակապով»... «Լիոն» նշեց, թէ Պրորի եւ Հարիրի պիտի հանդիպին

մազուլթի եւ ընտրութիւններուն հարցերը քննարկելու համար: Թերթերը նաեւ անդրադարձան զբոսաշրջութեան բնագաւառին մէջ լիբանանեան իրադրութիւններուն. 1244 գերմանացիներու Լիբանան ժամանումը եւ պանդուկատէրերու այն նախատեսութիւնները, ըստ որոնց՝ այս տարի ընտրութիւնները լեցուն պիտի ըլլան: Այս ծիրին մէջ վարչապետ Հարիրի պիտի նախագահէ զբոսաշրջային ժողովի մը, որուն ընթացքին պիտի քննարկուին այս բնագաւառի զարգացման առընչուող հարցեր եւ անոնց լուծումները գտնելու եւ գործնական քայլերու դիմելու միջոցները:

Լիբանանեան օրաթերթերը անդրադարձան նաեւ միջազգային վերջին իրադրութիւններուն, որոնց կարգին՝ Թէյ Աւուի մօտ պաղեստինցի մը կատարած անձնասպանական գործողութեան, որ խլեց 14 վիրաւոր: Թերթերը տուին նաեւ Սէնտական Արաբիոյ թանգարաններէն մէկուն մէջ ծագած հրդեհին լուրը. ըստ որոնց՝ արձանագրուած վնասները հասած են 27 միլիոն տոլարի: Սուրիոյ մէջ ձեռնարկուած փորձերուն սկսած են շուրի ամբարտակի փլուզման առնչութեամբ, կը գրեն թերթերը:

Լիբանանեան ներքին կեանքին առնչութեամբ, թերթերուն գլխաւոր լուրը հանդիսացաւ Ամշիթի մէջ տեղի ունեցած արկածը: Երկու շաբթիէն երեքշաբթի լուսցող առաւօտեան ժամը 4:00ին, Ամշիթի մէջ, Ալֆրէտ Ֆուատ պարանոյ մազլթած է երկրորդ յարկի վրայ գտնուող տուն մը, ուր տանտիրինը հետ կուտելէ ետք զայն դանակի բանի մը հարուածով

վիրաւորած է. այդ միջոցին, տան աղջիկը (8 տարեկան) արթնցած է եւ Ա. Ֆուատ դաշունահարելով սպաննած է զայն, ապա պարանոյ կրկին փախուստ տուած պահուն ան ինկած է եւ այդ պատճառով ոստիկանները յաջողած են զայն ձերբակալել: Թերթերը լուրսարձակի տակ առած են նաեւ լիբանանեան գաղանգն շրջաններու մէջ զբոսաշրջիկները ընդունելու համար տարուած աշխատանքները:

«Սաֆիր» արժարձած է Լիբանանի մէջ հողագործութեան դիմագրաւած դժուարութիւնները եւ նշած է վերջին շրջանին այդ մարզին մէջ տարածուած եւ բերքին ու ցանքին մեծ վնասներ հասցուցած հիւանդութիւնները:

Տեղական լուրերու եւ իրադրութիւններու կարգին՝ թերթերը անդրադարձան Ամբրիկեան համալսարանի հիւանդանոցին մէջ կայացած մամուլային ակումբին, որուն ընթացքին ներկայացուած է շոգարձակումով աչքի տկարութեան հարցերը լուծելու կարելիութիւնները: Ասուլիսին ընթացքի հրապարակուած են կատարուած փորձերուն թղթածրարները եւ ներկայացուած են արձանագրուած դրական արդիւնքները:

Լիբանանեան օրաթերթերը անդրադարձած են նաեւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի մէջ կայացած «Կենսոլորտի փառասուն»-ին եւ աշակերտական ցուցահանդէսին մասին: «Լիոն» կը նշէ, թէ նախարար Ֆ. Սիւրիոս հաստատած է, թէ քաղաքացիներուն պիտի տրուի իրենց իրաւունքները եւ շեշտած է, թէ նոր տուրքեր աւելցնելու ծրագիրներ չկան:

### ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Ազարի շէքերու (քաղաք) «Ենթա» հաստատութեան վաճառատներուն վարձակալները իրաւորուած են ժողովի մը, որ տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 17 Յունիս 2002, առաւօտեան ժամը 10:00ին, Ազարի շէքերու շրջափակին մէջ: Ներկայութիւնը կարելի է:

ԱԶԱՐԻ ՎԱՃԱՌՏՈՒՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱՍՈՒՄ

## NARRA TRADING & GENERAL SERVICES CO. S.A.R.L.

ՆԱՐԱ ԹԵՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ս.Պ.Ը.

(Սեփականատը՝ Վահէ Մանուշակեան)

ՎԻԵԹՆԱՄԵՆ ԵԹՈՎՊԻԱՅԵՆ ՍՐԻ ԼԱՆՔԱՅԵՆ ԵՒ ՖԻԼԻՓԻՆԵՆ ՍՊԱՍՈՒԲԵՆԵՐՈՒ ԱՊԱՇՏՈՒՄ

- Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն:
- Մեր նշանաբանը՝ անկեղծութիւն, ապահովութիւն,
- Մասնաւոր գիներ, վճարման դիւրութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն:

Պառնուի, City Hospital հիւանդանոցի փողոց, «Էլի» դրամատան շէք, 4րդ յարկ: Ըեռ. 03/324799, 01/897633 եւ 03/489989

# ՄԵԹԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԵՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԳՊՐԵՎԱՆՔԻ ՍՄԱԿԵՐՁԻ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ

## ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԴՐԱՍԱՅԱԿԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ ԵՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՉ

ԸՍՄԻ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ



Արամ Ա. կաթողիկոս՝ խօսքի պահուն (Լուսանկարը՝ ՍԹԻՏՏՕ ՍՇԼԱԿԻ)

Սփիւռքի պատմութեան մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դարձվանքը ունի իր իրաւատու տեղը՝ եկեղեցական եւ մտաւորական մարդու պատրաստելու իմաստով: Եւ իրաւամբ, իր առաքելութեան ամբողջ ժամանակաշրջանին, սփռվանքը եղաւ այն բացառիկ կեդրոններէն մէկը, ուրկէ ճառագայթեց հայ իմացական միտքը իր ամբողջական փայլով եւ այս երեսփոխան շնորհիլ աւելի եւս շեշտուեցաւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան դերակատարութեան կարեւորութիւնը մեր հաւաքական կեանքին մէջ:

Վերոյիշելի առաքելութեան դրսեւորումներէն մէկն էր երկն երկնայեան դարձվանքին բաղկի մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի նախագահութեամբ եւ Ազգային Ընդհանուր Ժողովի եկեղեցական թէ աշխարհական պատգամաւորներու ներկայութեամբ տեղի ունեցած դարձվանքի 72րդ կրթական տարեշրջանի ամառային հանդիսութիւնը:

Ներկայ էին նաեւ Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբաններ, ծնողներ եւ հոծ բազմութիւն մը:

Դարձվանքի ամառային հանդիսութիւնը առիթ մը դարձաւ, որ այդ կառոյցին մէջ իրենց հոգեմտաւոր կրթութիւնը եւ կազմաւորումը ստացած ուսանողներ անգամ մը եւս իրենց իմացական հաճոյքներէն բաժնի մը հանին հանդիսութեան ներկայ գտնուողներուն՝ գեղարուեստական բաժնիով մը, որուն մէջ հիմնական տեղ կը գրաւէին շարականներու եւ ազգային - հայրենասիրական երգերու երգեցողութիւնը:

Այնուհետեւ խօսք առաւ կաթողիկոսութեան դարձվանքի նախկին տեսուչ եւ Նոր Զուղայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ Շահան Օ. վրդ. Սարգիսեան: Ան համապարփակ հաշուետուութիւնը կատարեց դարձվանքի 2001-2002 կրթական տարեշրջանի գործունեութեան եւ շեշտը դրաւ այն իրողութեան վրայ, որ դարձվանքը տակաւին կը մնայ իմացական հարատւութեան եւ հոգեմտաւոր արժէքներու փոխանցման կեդրոն:

Շահան Օ. վրդ. Սարգիսեանի խօսքին աւարտին դարձվանքի նոր նշանակուած տեսուչ Պարթեւ վրդ. Կիլիկիեան իրաւիքեց դարձվանքի այս տարեշրջանի շրջանաւարտները՝ իրենց վկայականները ստանալու Արամ Ա. կաթողիկոսէն:

Այս տարեշրջանին դարձվանքը ունեցաւ հինգ շրջանաւարտներ. Յովհաննէս սրկ. Պուրնուսուլեան եւ Գէորգ սրկ. Փաշայան, որոնք աւարտած ըլլալով դարձվանքի 9ամեայ կրթական ծրագիրը՝ յարմարագոյն պարագային պիտի ստանան կուսակրօնութեան ձեռնադրութիւնը: Միւս երեք շրջանաւարտները աւարտեցին դարձվանքի քահանայական դասընթացքները: Անոնք են. Սահակ սրկ. Վահիլեան, Վրէժ սրկ. Քեօշկեան եւ Գէորգ սրկ. Շաքարեան:

Վկայական ցուցակներու յաջորդեց վեհափառ հօր պատգամը ներկայներուն: Ան իր խօսքին մէջ շեշտը դրաւ մարդակերտման եւ մարդու պատրաստութեան կարեւորութեան վրայ՝ նկատել տալով, որ ներկայիս քիչ մը անհնար է նկատելի է մարդու պակասը մեր ազգային - հասարակական կեանքին մէջ:

Ան իր մտահոգութիւնը յայտնեց, որ Սփիւռքի վանական գաղութներուն մարդու տրամադրած երբեմնի լիբանանահայ գաղութը ներկայիս կը դիմագրաւէ նոյն տագնապը: Այս մտահոգութեան մէկնելով, վեհափառը կոչ ուղղեց, որ անհրաժեշտ լրջութիւնը դրսեւորելի հայ դպրոցին նկատմամբ, որովհետեւ հայ դպրոցը հայակերտումի եւ մարդու պատրաստութեան հիմնական կուսաններէն մէկն է:

Վեհափառի պատգամին յաջորդեց «Կիլիկիա» հաւաքական երգեցողութիւնը, ապա Արամ Ա. կաթողիկոս հանդիսութիւնը փակեց «Պահպանիչ»ով:

### ՄԱՐՁԻԿ

ԻԱ. ՏԱՐԻ, 2002  
ԹԻԻ 4 (238)

ՀԱՄԱՐ ԵՐԵՎԱՆԻ ԳՊՈՒԿԱՐԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Ս.Բ. ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

- «Մարզիկ»-ի այս թիւով տեսնել՝
- Խմբագրական-Նուիրումի ճամբով
- Անրապնդեք բարոյական արժէքները (ԺԵ.) - Յարուք Չէքիճեան
- Մատենային յարցանակի եւ Հ.Մ.Ս. ակնային հարատւութեան - Վ. Աւագեան
- Գիրք մը եւ մարտ մը - Յ. Գեղարդ
- Չհողորդեան սկզբունքը - Վ. Յովհաննէսեան
- Հ.Մ.Ս. թորոնթոյի մասնաճիւղը երկն եւ այսօր - Չարեհ Տերվիշեան
- Հ.Մ.Ս. ի սկստուածները կը պատրաստուի համա- Հ.Մ.Ս. ակնային Ընդհանուր Բանակումին

Թիւր կ'ընդգրկէ նաեւ ընկերային, սկստական եւ մանկապատանեկան բաժիններ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ս. ակնային կեանքի անդրադարձներ: Ստանալու համար դիմել Համազգայինի գրախանութի: Սակ՝ 3000 լ.:

# ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARD

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՆԱՄԱԿԱՆԻ

Պատուարժան «Ազգակ» օրաթերթի խմբագրություն, Ուրբաթ, 24 Մայիսին, ընդառաջելով հորս փառաքին, ընկերակցեց այնպիսի 2.Մ.Բ.Մ.ի Պեյրոնի ակումբ, ուր տեղի պիտի ունենար քառասունական թուականներու 2.Մ.Բ.Մ.ի ֆուլբոլի խումբի խմբագրության վարչի վառ Յովհաննեսյանի «Յուզեր 2.Մ.Բ.Մ.ակա-նի կեանքի 1940-1952» գիրքին գինեօմը:

Ակումբին սրահը մտանք. գրեթե բոլոր աթոռները գրառուած էին: Անկիւն մը նստելէ ետք շուրջս դիտեցի՝ տարեկից մը տեսնելու յոյսով, բայց ոչ մէկ երիտասարդ կար այդ տեղ: Ներկաները բոլորն ալ երեք պատասխանատուներ էին, հին ֆուլբոլիստներ, 2.Մ.Բ.Մ.ի միջին տարիքի համակիրներ, բայց երիտասարդները բացակայ էին...

Բայց ինչու: «Հաւանաբար այս հանդիպումը երիտասարդներուն յարմար չէ», մտածեցի: Սակայն, օրուան բանախօսին, 2.Մ.Բ.Մ.ի վեթեւաններուն ներկայացուցիչին՝ Վարդի վառ Յովհաննեսյանի եւ 2.Մ.Բ.Մ.ի Կեդրոնական վարչութեան խօսքերէն ետք պատկերացումս 180 աստիճան փոխուեցաւ:

Այդ տեղ պէտք էր ներկայ գտնուէին 2.Մ.Բ.Մ.ական երիտասարդներ, այս միութեան երիտասարդ համակիրները եւ մա՛նաւոր մեր մարզիկները: Ձեռնարկին ընթացքին յիշատակուեցան մօտ կես դար առաջ տեղի ունեցած դէպքերու յուշեր, սակայն այդ իրադարձութիւնները եղած են եւ կը շարունակեն մնալ ապագայ սերունդներուն լուսաւոր փարոսները: Այդ օր յիշուեցան այն օրերը, երբ 2.Մ.Բ.Մ. կը դիմագրաւէր սուր տագնապ, եւ մարզիկներ ֆուլբոլի խումբը կը լքէին նիւթակն ակնկալութեամբ:

Բայց ո՛ր եւն աւսօր անոք, ո՛վ կը խօսի անոնց մասին, երբ վարդիվառներու, ձոքիներու, Սաաթիներու եւ այլոց պէս նուիրեալներ այսօր կը յիշուին իբրեւ անցեալ կերտած 2.Մ.Բ.Մ.ականներ: Այդ օր ո՛ր էին մեր երիտասարդներն ու մարզիկները: Վեթեան ֆուլբոլիստներուն կտրած ճամբան նոր սերունդին ապագան չէ՛ արդեօք:

1946ին վարդիվառ Յովհաննեսյան, իբրեւ արհեստավարժ ֆուլբոլիստ, գերադասելով ազգին շահերը իր անձնական շահերուն, մերժած էր իր ստացած Թուրքի հրաւերը: Եթէ ընդունած ըլլար հրաւերը, ան յարգանքի պիտի արժանանար իր միութեան կողմէ: Պետք է գիտնալ, որ ազգը եւ միութեանակալ վեհ ոգին են, որոնք կրնան մեծարել, իսկ ուրիշներ կրնան միայն գնահատել:

ՎԱՐԱՆԴ ԵԱՓՈՒՃԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԻՐԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Վերջին տարիներուն Հայ-իրանական մշակութային յարաբերութիւններուն աշխուժացման եւ 2002-2003 թուականներուն իրագործուելիք ծրագիրներուն մասին խօսելու համար յատկացուած էր 7 Յունիսին Հայաստանի մշակութի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նախարարութեան եւ Հայաստանի մէջ իրանի դեսպանատան հրաւիրած մամուլի ասուլիսը:

Ասուլիսին կը մասնակցէին մշակութի փոխ նախարար Կարէն Արիստակէսեան, իրանի դեսպան Մոհամէտ Ֆարհատ Բոլէյնի, Հայ մտաւորականներ, գրականութեան եւ արուեստի գործիչներ եւ իրանի դեսպանատան աշխատակիցներ:

Խօսք առաւ իրանի դեսպանը, որ մասնաւորապէս նշեց, որ անցեալ երկու տարիներուն բաւական աշխուժացած է Հայ-իրանական մշակութային համագործակցութիւնը:

Այս ծիրին մէջ կատարուած են բազմաթիւ փոխ-նակումներ, կազմակերպուած են համերգներ, գեղարուեստական ստեղծագործութիւններու ցուցադրութիւն եւ թատերական ներկայացումներ:

Իրանի մէջ հանդէս եկած հայկական խումբեր արժանացած են տեղացի հանդիսականներուն գնահատանքին: Միայն նախորդ տարի փոխադարձ այցելութիւններ տուած են գիտութեան եւ մշակութի 100էն աւելի ներկայացուցիչներ:

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԵՏ

7 Յունիսին Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոս տեսակցած է Հայաստանի մէջ Գերմանիոյ դեսպան Հանս - Ուոլֆ Պարթիսի հետ:

Վեհափառը ողջունած է դեսպանը՝ նշելով, որ Ս. Էլմիածին կը համագործակցի եւ ջերմ յարաբերութիւններու մէջ է Հայաստանի մէջ գտնուող դիւանագիտական առաքելութիւններուն եւ մասնաւորապէս Գերմանիոյ դեսպանատան հետ:

Վեհափառը տեղեկացուած է, որ ներկայիս Ս. Էլմիածին եւ Գերմանիոյ կրօնական կազմակերպութիւններուն միջեւ գոյութիւն ունին սերտ կապեր, որոնք կ'ընդգրկեն միջեկեղեցական, բարեսիրական եւ կրթական մարզերը:

Գերմանիոյ դեսպանը յայտնած է, որ իր առաքելութեան ընթացքին ամէն ինչ պիտի ընէ երկու երկիրներուն եւ եկեղեցիներուն միջեւ ստեղծուած ջերմ յարաբերութիւններուն զարգացման համար:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲՈՒԷՃԻ ԹԱՏԵՐԱՆՈՒՄ

«ՊՏՈՅՏ ՄԸ ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ»



Ուրբաթ, 7 Յունիսի երեկոյան ժամը 8:00ին, Հայ Աւետարանական Ա. եկեղեցւոյ հանդիսարանին մէջ Հայ Աւետարանական քոլէճի թատերախումբը ներկայացուց «Պտոյտ մը Յակոբ Պարոնեանի ստեղծագործութիւններուն մէջ» ներկայացումը: Ձեռնարկին բացման խօսքը կատարեց դպրոցի տնօրէն Զաւէն Մարրիան:

Ապա լալորդաբար երեք երգիծական տեսարաններ ներկայացուցին Յակոբ Պարոնեանի գործերէն: «Բաղաձայնարութեան վնասներէն» «Վասն չարչարանաց Սեդրակ աղայի», «Հոսիսի ձեռնադրութիւն» «Թիւրիմացութիւն» եւ «Կանանց մէջ հասակի խնդիր» հատուածները:

Թատերական երաժշտական ներկայացման բեմադրիչն էր Կարինէ Աճէմեան, իսկ դերակատարները, որոնցմէ ոմանք քանի մը տեսարանի մէջ դեր վերցուցած էին, հետեւեալներն էին՝ Շանթ Իգնատիոսեան, Արմէն Վայճեան, Ժան Տեմիրճեան, Մարտո Իգնատիոսեան, Արի Ահարոնեան, Հրաչ Քեսեանեան, Թագուհի Յովհաննէսեան, Մաթիլտա Տեմիրճեան, Փաթիլ Պեգեան, Նայիր Թաւադեան, Թամար Քեսեանեան, Հայկ Օհանեան, Կարէն Պասմաճեան, Ալին Քէչիշեան, Մարթ Իգնատիոսեան, Գեղանի Գուգուճեան, Գայիանէ Գուգուճեան եւ Վարդէնի Պոյաճեան: Երաժշտական համադրումը կատարած էր դաշնակահար Գեղանի Գուգուճեան:

